


ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
13.01.2023թ. թիվ 2/3-Լ որոշման



Պալատի խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան



**ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
Կ Ա Ր Գ**

ք. Երևան, 2023թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով **(այսուհետ՝ Կարգ)** սահմանվում են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** որակավորման հանձնաժողովի **(այսուհետ՝ նաև Որակավորման հանձնաժողով կամ Հանձնաժողով)** ձևավորման, գործունեության, ինչպես նաև երկու իրավաբան գիտնական անդամների ընտրության կարգն ու պայմանները:

2. Պալատի որակավորման հանձնաժողովը որակավորման քննությունները կազմակերպելու և դրանց արդյունքներն ամփոփելու նպատակով երկու տարի ժամկետով կազմավորված, ինն անդամից բաղկացած մարմին է:

3. Որակավորման հանձնաժողովի աշխատանքներին նյութական, տեխնիկական և անհրաժեշտ այլ աջակցությունը ցուցաբերում է Պալատի աշխատակազմը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամը **(այսուհետ՝ նաև ՀՀ փաստաբանական ակադեմիա)**:

4. Որակավորման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Փաստաբանության մասին» օրենքով **(այսուհետ նաև՝ Օրենք)**, Պալատի կանոնադրությամբ **(այսուհետ՝ Կանոնադրություն)**, սույն կարգով, ինչպես նաև Պալատի խորհրդի **(այսուհետ՝ նաև Խորհուրդ)** կողմից ընդունված այլ իրավական ակտերով:

II. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

5. Որակավորման հանձնաժողովը կազմավորվում է երկու տարի ժամկետով՝ ինն անդամի կազմով, ներկայացուցչության հետևյալ համամասնությամբ.

1) Պալատի անդամ հինգ փաստաբան, որոնք ընտրվում են սույն կարգին համապատասխան Պալատի խորհրդի կողմից.

2) ՀՀ արդարադատության նախարարությունից մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ.

3) ՀՀ վճռաբեկ դատարանից մեկ դատավոր՝ վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացմամբ.

4) երկու իրավաբան գիտնական, որոնք ընտրվում են «Փաստաբանության մասին» օրենքին, Կանոնադրությամբ և սույն Կարգին համապատասխան:

6. Հանձնաժողովի հինգ փաստաբան անդամները ընտրվում են Պալատի նախագահի առաջադրմամբ՝ արտոնագիրը չկասեցված, բարձր մասնագիտական որակներով օժտված և առնվազն 5 (հինգ) տարվա փաստաբանական ստաժ (այդ ժամանակահատվածի մեջ չի ներառվում փաստաբանի արտոնագրի կասեցված ժամանակահատվածը) ունեցող փաստաբանների կազմից: Սույն կետում նշված փաստաբանական ստաժի սահմանափակումը չի տարածվում գիտական աստիճան ունեցող փաստաբանի նկատմամբ:

(կետը փոփոխվել է 14.03.2023թ. թիվ 7/9-Լ որոշմամբ)

7. Հանձնաժողովի իրավաբան-գիտնական անդամի թեկնածու կարող են

առաջադրվել իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունում վերջին վեց տարիների ընթացքում առնվազն երեք տարի իրավունք դասավանդած կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարած անձինք, ընդ որում արտասահմանում գիտական աստիճան ստացած անձինք պետք է ներկայացնեն լիազոր մարմնի կողմից տրված դրա համարժեքությունը հավաստող փաստաթուղթը:

8. Թեկնածուներին ներգրավելու նպատակով Պալատի խորհուրդը Հանձնաժողովի ընտրություններից առնվազն 50 (հիսուն) օր առաջ հայտարարում է մրցույթ, որի շրջանակներում պետական կամ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունները կարող են սույն կարգի 9-րդ կետով սահմանված օրվանից տասնօրյա ժամկետում առաջադրել Հանձնաժողովի իրավաբան-գիտնական անդամի թեկնածուի մեկական հավակնորդ:

9. Մրցույթի մասին ծանուցումը համարվում է հրապարակված Պալատի կայքում տեղադրվելու օրվանից:

III. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆՂԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

10. Հանձնաժողովի փաստաբան անդամների թեկնածությունները խորհրդին են ներկայացվում Պալատի նախագահի կողմից:

11. Փաստաբանների պալատի նախագահը Հանձնաժողովի փաստաբան անդամների թեկնածությունները առաջադրելու համար կարող է անցկացնել հարցազրույց, որի ընթացքում հաշվի է առնվում թեկնածուի գիտական աստիճանը և/կամ կոչումը, կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելը, առնչությունը գիտելիքների ստուգման կամ կրթական գործընթացներին, ինչպես նաև ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

12. Հանձնաժողովի փաստաբան անդամների ընտրությունը կազմակերպվում է բաց քվեարկության միջոցով:

13. Ընտրված են համարվում այն փաստաբանները, ում օգտին կողմ է քվեարկում խորհրդի՝ նիստին ներկա անդամների կեսից ավելին:

14. Այն դեպքում, երբ Հանձնաժողովի փաստաբան անդամների թեկնածուներից որևէ մեկը չի ստանում նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությունը, ապա Պալատի նախագահը ողջամիտ ժամկետում ներկայացնում է Հանձնաժողովի փաստաբան անդամի այլ թեկնածու:

IV. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԻՏՆԱԿԱՆ ԱՆՂԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

15. Հանձնաժողովի իրավաբան գիտնական անդամի թեկնածություն ներկայացնելու համար Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է ներկայացնեն տվյալ հաստատության ղեկավարի կողմից ստորագրված դիմում, որում առնվազն պետք է

նշվի թեկնածուի անունը, ազգանունը, հայրանունը, հեռախոսահամարը, հասցեն և էլեկտրոնային փոստի հասցեն, հաստատությունը, որտեղ դասավանդում է թեկնածուն, դասավանդման առարկան (առարկաները) ու ժամաքանակը, ինչպես նաև թեկնածուի գրավոր համաձայնությունը Հանձնաժողովի կազմում ընգրկվելու վերաբերյալ: Սույն կետով սահմանված դիմումին պետք է կցվի.

- 1) թեկնածուի մեկ գունավոր լուսանկար.
- 2) անձը հաստատող փաստաթուղթ.
- 3) ինքնակենսագրական թերթիկ.
- 4) բարձրագույն իրավաբանական կրթության մասին փաստաթուղթ.
- 5) գիտական աստիճանի և գիտական կոչման (առկայության դեպքում)

վերաբերյալ փաստաթուղթ.

6) տեղեկանք՝ վերջին վեց տարիների ընթացքում առնվազն երեք տարի իրավունք դասավանդելու կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարելու վերաբերյալ.

7) գիտական հոդվածների և գիտական աշխատանքների վերաբերյալ տեղեկություն՝ ներառյալ գիտական աշխատանքներին ծանոթանալու վերաբերյալ հղումներով կամ այդ աշխատանքների կցմամբ:

16. Սույն կարգով սահմանված դիմումը պետք է ներկայացվի ծանուցման հրապարակման օրվանից 10 (տասը) օրվա ընթացքում:

17. Սույն կարգով սահմանված փաստաթղթերը կարող է ներկայացվել առձեռն՝ մուտք անելով դիմումը և կից փաստաթղթերը Պալատ, փոստով կամ Պալատի պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկելով:

18. Հանձնաժողովի իրավաբան գիտնականների թեկնածուների վերաբերյալ տեղեկությունները և դրանց վերաբերելի փաստաթղթերը Խորհրդի գործունեության կարգին համապատասխան տեղադրվում են էլեկտրոնային պահոցում:

19. Խորհուրդը ծանուցման հրապարակման տասնմեկերորդ օրվանից սկսած 20 (քսան) օրվա ընթացքում ուսումնասիրում է փաստաթղթերը, որից հետո որոշում է կայացնում որակավորման հանձնաժողովի գիտնական անդամի թեկնածուների շարքում ներառելու (թեկնածուների ցանկը հաստատելու) մասին:

20. Խորհուրդը մերժում է իրավաբան գիտնականին թեկնածուների ցանկում ներառելու դիմումը, եթե դիմումը կամ կցված փաստաթղթերը չեն համապատասխանում Օրենքի, Պալատի կանոնադրության կամ սույն կարգի պահանջներին:

21. Որակավորման հանձնաժողովի գիտնական անդամների ընտրությունը կատարվում է քվեաթերթիկներով, որում այբբենական կարգով ներառվում են բոլոր թեկնածուների անունները:

22. Հանձնաժողովի գիտնական անդամների ընտրությունը կազմակերպվում է բաց քվեարկության միջոցով: Ընտրված են համարվում առավել շատ ձայներ ստացած թեկնածուները: Խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է ընտրել առավելագույնը Հանձնաժողովի գիտնական անդամի երկու թեկնածու: Երկուսից ավելի թեկնածուի ընտրելու դեպքում քվեաթերթիկը կհամարվի անվավեր: Քվեաթերթիկը ստորագրում է Խորհրդի անդամը:

23. Եթե Հանձնաժողովի գիտնական անդամի որևէ թեկնածու ստանում է Խորհրդի նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելին, ապա համարվում է

ընտրված որակավորման հանձնաժողովի անդամ:

24. Եթե որևէ թեկնածու ընտրված չի համարվում, ապա անցկացվում է երկրորդ փուլ, որին մասնակցում են ամենաշատ ձայներ ստացած չորս թեկնածու: Սույն կետում նշված դեպքում, Խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է ընտրել ոչ ավել քան երկու թեկնածու: Ընտրված են համարվում ամենաշատ ձայներ ստացած երկու թեկնածուները:

25. Եթե ընտրվել է միայն մեկ թեկնածու, ապա երկրորդ անդամին ընտրելու համար անցկացվում է երկրորդ փուլ, որին մասնակցում են ամենաշատ ձայներ ստացած երեք թեկնածու: Սույն կետում նշված դեպքում, Խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է ընտրել միայն մեկ թեկնածու: Ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստանում է ամենաշատ ձայները:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

26. Հանձնաժողովն իր գործունեություն իրականացնում է նիստերի հրավիրման և քննությունների կազմակերպման միջոցով: Նիստերին առնչվող նյութերը տեղադրվելու են Հանձնաժողովի քարտուղարի կողմից կառավարվող էլեկտրոնային պահոցում:

27. Հանձնաժողովի նորընտիր կազմի առաջին նիստի կազմակերպման տեխնիկական մասն ապահովում է Պալատի աշխատակազմի ղեկավարը: Աշխատակազմի ղեկավարը առաջարկում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամին հրավիրել Հանձնաժողովի անդրանիկ նիստը՝ Հանձնաժողովի նախագահ ընտրելու և քարտուղար նշանակելու օրակարգային հարցերով: Հանձնաժողովի տարիքով ավագ անդամի հրավերը՝ նիստի տեղի և ժամանակի մասին, Հանձնաժողովի մյուս անդամներին ուղարկում է Պալատի աշխատակազմի ղեկավարը:

28. Այն դեպքերում, երբ Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը հրաժարվում է նիստ հրավիրել, կամ երկու օրյա ժամկետում չի արձագանքում Պալատի աշխատակազմի ղեկավարի առաջարկին, ապա Հանձնաժողովի նիստը հրավիրում է Պալատի աշխատակազմի ղեկավարը:

29. Հանձնաժողովի անդրանիկ նիստը վարում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը մինչև Հանձնաժողովի նախագահի ընտրությունը:

30. Հանձնաժողովի առաջին նիստի ընթացքում բաց քվեարկության միջոցով ընտրվում է Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

31. Հանձնաժողովի անդամը կարող է առաջադրել Հանձնաժողովի նախագահի իր կամ այլ անդամի մեկ թեկնածություն:

32. Հանձնաժողովի նախագահի ռաջադրված թեկնածուների ընտրությունից առաջ ըստ ազգանունների այբբենական հերթականության Հանձնաժողովը լսում է թեկնածուներին:

33. Ներկա թեկնածուներին լսելուց հետո Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ բաց քվեարկությամբ ընտրում է մեկ թեկնածուի: Հանձնաժողովի նախագահի թեկնածությունները քվեարկության են դրվում ըստ ազգանունների այբբենական հերթականության:

34. Եթե որևէ թեկնածու ստանում է Հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների առնվազն կեսը, ապա համարվում է նշանակված

Հանձնաժողովի նախագահ՝ Հանձնաժողովի նորընտիր կազմի գործունեության ժամկետով: Եթե որևէ թեկնածու չի ստանում Հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների առնվազն կեսը, ապա նույն օրը անցկացվում է երկրորդ փուլ, որին իրավունք ունեն մասնակցելու առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուները: Նույն կարգով, Հանձնաժողովի անդամները քվեարկում են միայն մեկ թեկնածուի օգտին: Ձայների հավասարության դեպքում անցկացվում է վիճակահանություն:

35. Հանձնաժողովի նախագահի ընտրությունից հետո Պալատի նախագահի ներկայացմամբ քվեարկության է դրվում Հանձնաժողովի քարտուղարի ընտրության հարցը:

36. Հանձնաժողովի քարտուղարի թեկնածուն ներկայացվում է ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմից և չի հանդիսանում Հանձնաժողովի անդամ:

37. Որակավորման հանձնաժողովի նիստերը հրավիրվում են տարեկան երկու անգամից ոչ պակաս, իսկ Որակավորման քննություններն անցկացվում են ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ:

38. Հանձնաժողովի նիստերը անցկացվում են ինչպես առկա, այնպես էլ հեռակա (հարցման) ձևաչափով:

39. Հանձնաժողովի անդամներին նիստի օրակարգի, նրա աշխատանքը սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին առձեռն կամ փոստով (պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստով) հանձնվում կամ ուղարկվում է գրավոր ծանուցում ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից 3 (երեք) օր առաջ:

40. Հանձնաժողովի նիստն իրավասու է, եթե նիստին մասնակցում են Հանձնաժողովի անդամների առնվազն կեսը: Քվեարկության ժամանակ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցում չի թույլատրվում:

41. Առկա նիստով յուրաքանչյուր քվեարկությունից առաջ Հանձնաժողովի նախագահը կրկնում է քվեարկության դրվող հարցը ճշգրիտ ձևակերպմամբ, հաշվում և բարձրաձայն հայտարարում է «կողմ» տրված ձայների թիվը, այնուհետև նույն կարգով հաշվում «դեմ» ձայների թիվը: Հանձնաժողովի որոշումն ընդունվում է ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նիստը նախագահողի ձայնը որոշիչ է:

42. Առկա նիստով քվեարկության արդյունքներն արտացոլվում են Հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ՝ պարզ թղթային եղանակով կամ ձայնագրառման համակարգով:

43. Պարզ թղթային արձանագրության մեջ նշվում են՝

1) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,

2) նիստին մասնակցած անձանց քանակը, անունները,

3) նիստի օրակարգը,

4) նիստում կայացած ելույթների հիմնական դրույթները,

5) քվեարկության դրված հարցերը և այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները,

6) նիստի ընդունած որոշումները:

44. Պարզ թղթային արձանագրությունը ստորագրում է Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

45. Ձայնագրառման համակարգով նիստն արձանագրելու դեպքում Հանձնաժողովի քարտուղարը կազմում և ստորագրում է ձայնագրառման վերաբերյալ արձանագրությունը, որին կցվում է նիստի ձայնագրությունը:

46. Հեռակա (հարցման) կարգով Հանձնաժողովի նիստն անցկացվում և ամփոփվում է հետևյալ կերպ՝

1) Հանձնաժողովի նախագահը էլեկտրոնային փոստով Հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև քարտուղարին ուղարկում է նիստի օրակարգի հարցերը, հարցերի ամփոփման օրվա (ժամի) և դիրքորոշումն ուղարկելու ժամկետի մասին տեղեկություն (որը չի կարող երկու աշխատանքային օրերից պակաս լինել), ինչպես նաև ընդունվող որոշման նախագիծը.

2) Հանձնաժողովի անդամները օրակարգում ընդգրկված հարցերով որոշումների նախագծերի վերաբերյալ իրենց դիրքորոշումը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում են Հանձնաժողովի նախագահին, անդամներին և քարտուղարին.

3) Հարցերի ամփոփման համար հայտարարված օրվա համապատասխան ժամին, Հանձնաժողովի նախագահը ամփոփում է Հանձնաժողովի անդամների կողմից ուղարկված դիրքորոշումները.

4) Հեռավար (հարցման) կարգով Հանձնաժողովի նիստը համարվում է կայացած և որոշումը՝ ընդունված, եթե որոշման նախագծի վերաբերյալ «կողմ» դիրքորոշումը սահմանված ժամկետում հայտնել (ուղարկել) են Հանձնաժողովի առնվազն 5 (հինգ) անդամ:

47. Հեռակա (հարցման) կարգով Հանձնաժողովի նիստի ամփոփման վերաբերյալ Հանձնաժողովի քարտուղարը կազմում է արձանագրություն:

48. Հանձնաժողովի նիստը կարող է անցկացվել առկա եղանակով առցանց ձևաչափով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կամ հաղորդակցության միջոցներով՝ Հանձնաժողովի անդամների անմիջական մասնակցությամբ՝ հայտարարված արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում կամ համաճարակի, տարերային աղետների կամ արտակարգ բնույթ կրող այլ անկանխելի պատճառով անձանց տեղաշարժի կամ անմիջական շփումների սահմանափակումների դեպքերում:

49. Որակավորման քննություններն անցկացվում են առանց նիստի գումարման՝ Հանձնաժողովի անդամների կողմից քննություններին անմիջականորեն մասնակցելու միջոցով: Հանձնաժողովի անդամներին քննությունների անցկացման վայրի, օրվա և սկսելու ժամի մասին ծանուցում է Հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով՝ քննությունների օրվանից առնվազն 3 (երեք) օր առաջ:

50. Որակավորման քննությունների առաջին փուլը կարող է անցկացվել Որակավորման հանձնաժողովի առնվազն երկու անդամի ներկայության դեպքում, իսկ երկրորդ փուլը՝ առնվազն հինգ անդամի ներկայությամբ:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

51. Հանձնաժողովը՝

1) սահմանում է որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցերը.

2) սահմանում է որակավորման քննությունների մասնակցության դիմումի, ինքնակենսագրական տվյալներ պարունակող թերթիկի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի (այդ թվում՝ Հանձնաժողովի անդամների և դիտորդների վկայականների) ձևերը (ձևանմուշները)։

3) Աշխատակազմի միջոցով կազմակերպում է որակավորման քննությունների մասնակցության դիմումների և փաստաթղթերի ընդունումը։

4) ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների արժանահավատությունը պարզելու նպատակով կարող է հարցումներ կատարել պետական և ոչ պետական մարմիններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց։

5) ուսումնասիրում է որակավորման քննություններին մասնակցելու համար ներկայացված դիմումները և կից փաստաթղթերը՝ որոշում ընդունելով որակավորման քննություններին մասնակցելու թույլատրելու կամ մերժելու մասին։

6) հսկողություն է իրականացնում որակավորման քննությունների ընթացքի նկատմամբ։

7) անցկացնում է որակավորման քննությունները՝ գրավոր և բանավոր փուլերը։

8) ամփոփում է որակավորման քննությունների գրավոր փուլի և բանավոր փուլի արդյունքները։

9) որակավորման քննությունների գրավոր և բանավոր փուլերի արդյունքների հիման վրա ընդունում է ամփոփիչ որոշում՝ հաստատելով գրավոր և բանավոր փուլերը հաղթահարած և վկայագրեր ստանալու իրավունք ստացած հավակնորդների ցանկը։

10) ընդունելության քննությունների կազմակերպմանը և անցկացմանը վերաբերող իր լիազորությունների շրջանակներում ընդունում է որոշումներ, այդ թվում՝ սահմանում է հաշմանդամություն կամ այլ հատուկ (օժանդակ) կարիքներ ունեցող անձանց որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման առանձնահատկությունները՝ պահպանելով ընդհանուր պահանջները (ժամկետ, գնահատում և այլն)։

11) փոփոխություններ և/կամ լրացումներ է կատարում Հանձնաժողովի որոշումներում, վերացնում է անճշտությունները և/կամ վրիպակները։

12) Հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ ընտրում է առարկայական քննական հանձնախմբի անդամներին։

13) իրականացնում է Օրենքի, Պալատի կանոնադրության, սույն կարգին և Պալատի խորհրդի հաստատած այլ կարգին համապատասխան այլ գործողություններ։

52. Հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում է Հանձնաժողովի աշխատանքները։

2) հրավիրում և վարում է Հանձնաժողովի նիստերը։

3) ներգրավում է դիտորդների

4) ստորագրում է Հանձնաժողովի որոշումները։

5) հաստատում է որակավորման քննությունների համար անհրաժեշտ խնդիրները, հարցատոմսերը և այլ անհրաժեշտ նյութերը, ինչպես նաև Պալատի միջոցով և հաշվին կազմակերպում է նշված նյութերի կազմումը՝ պայմանագրային հիմունքներով։

6) ապահովում է որակավորման քննությունների ժամանակ օգտագործվող խնդիրների, հարցատոմսերի և այլ առաջադրանքների գաղտնիությունը.

7) իրականացնում է Օրենքի, Պալատի կանոնադրության և սույն կարգին համապատասխան այլ գործողություններ:

53. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) կազմակերպում է Հանձնաժողովի նիստերի արձանագրության վարումը.

2) ապահովում է որակավորման քննությանը թույլատրված մասնակիցների ծանուցումները քննությունների ժամանակացույցի մասին.

3) տեխնիկական աջակցություն է ցուցաբերում որակավորման քննությունների կազմակերպմանը.

4) իրականացնում է Պալատի կանոնադրության, սույն կարգին և Պալատի խորհրդի այլ կարգին համապատասխան այլ գործողություններ:

VII. ԱՆՑՈՒՄ ԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

54. Սույն կարգն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը: